ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՍՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ.-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ իր.գ.թ., ավագ դասախոս Տոնոյան Լ. Ժ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Ընտանեկան իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

(հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

Ընտանեկան իրավունքը որպես իրավունքի ճյուղ կարգավորում է ընտանեկան հարաբերությունները, որոնք հիմնված են ամուսնության և ընտանիքին պատկանելու փաստի վրա: Յուրաքանչյուր մարդու կյանքում ընտանեկան հարաբերությունները ունեն կարևոր նշանակություն: Ընտանիքը հասարակական կյանքում ունի մեծ ներգործություն ինչպես մարդկային ցեղի շարունակման, այնպես էլ երեխաների դաստիարակության գործում:

Ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են ընտանեկան օրենսդրության նորմերով, որոնք ձևավորվել են բարոյական, սովորութային, կրոնական նորմերի ազդեցությամբ: Ընտանեկան օրենսդրությունը կարգավորում է.

- ամուսնության կնքման կարգն ու պայմանները, ամուսնության դադարումը և անվավեր ճանաչումը,
- ընտանիքում առաջացող անձնական և գույքային հարաբերությունները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերումը և տեղավորումը:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակը ուսանողների կողմից ընտանեկան իրավունքի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթների յուրացումն է և գործնական կիրառումը:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

- ձեռքբերել ÁÝï³Ý»Ï³Ý իրավունքի նորմերը վերլուծելու հմտություն,
- ձևավորել ընտանեկան իրավունքի գիտության զարգացման հիմնական միտումների վերաբերյալ ամբողջական պատկերացում,
- ձեռքբերել քաղաքացիա-իրավական և դատավարական փաստաթղթերի կազմման հմտություններ:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը ընտանեկան-իրավական հարաբերությունների տեսության և պրակտիկայի ուսումնասիրությունն է:

Դասընթացի առարկան անձնական ոչ գույքային և գույքային հարաբերությունների ուսումնասիրությունն է, որը առաջանում է ամուսինների, ծնողների և երեխաների, մյուս հարազատների և ընտանիքի անդամների միջև:

Դասընթացի մուտքային պահանջները

Սկսելով դասընթացը ուսանողները պետք ունենան գիտելիքներ և հմտություններ քաղաքացիական օրենսդրության վերաբերյալ:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Ընտանեկան իրավունքի, դրա սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության և էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք:
2. Ընտանեկան հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի իմացություն՝ ՀՀ Սահմանադրություն, ՀՀ ընտանեկան օրենսգիրք, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման» մասին ՀՀ օրենք, քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին ԱՊՀ երկրների 22.01.1993թ Կոնվենցիա, Երեխաների իրավունքների մասին 29.05.1993թ.

Կոնվենցիա, Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին 29.05.1993թ. Հաագայի կոնվենցիա։

Հմտությունները՝

- *գիտելիքի կիրառման հմտությունները՝*

1. Կարող է վերլուծել ընտանեկան և քաղաքացիական իրավունքի նորմերը։
2. Կարող է ազատորեն կողմնորոշվել ընտանեկան իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համակարգում:

- *ընդհանրական իմացական հմտությունները՝*

3. Կարող է վիճելի ընտանեկան իրավահարաբերություններում գտնել համապատասխան լուծումներ:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- *ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝*

1. Ունակ է ինքնուրույն կազմել ամուսնական պայմանագրի նախագիծ,
2. Ունակ է ինքնուրույն որոշել ընտանեկան վեճերի ընթացքում քննարկման ենթակա խնդիրները,
3. Ունակ է կազմել ամուսնալուծության և ամուսնությունն անվավեր ճանաչման վերաբերյալ հայցադիմումի նախագիծ,
4. Ունակ է որոշել երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը:

Դասավանդման եղանակները և մեթոդները

1. դասախոսություններ,
2. սեմինարներ,
3. նախադեպային ակտերի վերլուծություն,
4. ուսանողի ինքնուրույն և խմբային աշխատանք,

5. գրականության և նախադեպային ակտերի ինքնուրույն ուսումնասիրություն:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 10 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա առաջին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարություն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**10**
1.1.1.Դասախոսություններ	**4**
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**6**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**58**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	**28**
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	**30**
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**15**
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	**15**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

1. **Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների**

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար**

			պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Ամուսնության կնքման կարգն ու պայմանները: Ամուսնության անվավերությունը: Ամուսնության դադարման հասկացությունը, հիմքերը և կարգը	2	1	1
Թեմա 2. Ամուսինների անձնական ոչ գույքային և գույքային հարաբերությունները	4	1	1
Թեմա 3 .Ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները: Ծնողների իրավունքներն ու պարտականությունները	4	1	2
Թեմա 4 .Ընտանիքի անդամների ալիմենտային պարտավորությունները Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դաստիարակության եղանակները: Օտարերկրյա	4	1	2
Ընդամենը	10	4	6

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Ընտանեկան իրավունքի հասկացությունը և առարկան

Ընտանեկան իրավունքի առարկան, մեթոդը, նպատակը և խնդիրները: Ընտանեկան իրավունքի աղբյուրները: Ընտանեկան իրավահարաբերությունների հասկացությունը և տարրերը: Իրավաբանական փաստերը որպես ընտանեկան հարաբերությունների առաջացման հիմքեր: Ընտանիքի հասկացությունը: Ընտանեկան իրավունքների իրականացումը և պաշտպանությունը: Վաղեմության ժամկետները ընտանեկան իրավունքում

Թեմա 2. Ամուսնության կնքումը

Ամուսնության հասկացությունը: Ամուսնության կնքման պայմանները: Ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները: Ամուսնության կնքման կարգը: Ամուսնացող անձանց բժշկական հետազոտությունը: Ամուսնության անվավերությունը: Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձինք: Ամուսնությունն անվավեր ճանաչելու իրավական հետևանքները

Թեմա 3. Ամուսնության դադարումը

Ամուսնության դադարումը: Ամուսնության դադարման հասկացությունը, հիմքերը և կարգը: Ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում: Ամուսնալուծությունը դատական կարգով: Ամուսնալուծվելիս ամուսինների միջև ծագող վեճերի քննարկման կարգը

Թեմա 4. Ամուսինների իրավունքները և պարտականությունները

Ամուսինների անձնական ոչ գույքային հարաբերությունները: Ամուսինների գույքային իրավունքները և պարտականությունները: Ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը: Ամուսնական պայմանագրի հասկացությունը, կնքման կարգն ու պայմանները: Ամուսինների պատասխանատվությունը

Թեմա 5. Ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները

Երեխաների սերման հաստատումը: Հայրության ճանաչումը դատական կարգով: Հայրության (մայրության) վիճարկումը: Երեխաների անձնական ոչ գույքային իրավունքները: Երեխաների անձնական ոչ գույքային իրավունքները

Թեմա 6. Ծնողների իրավունքներն ու պարտականությունները

Ծնողական իրավունքների հասկացությունը: Երեխաներին դաստիարակելու և կրթություն տալու՝ ծնողների իրավունքներն ու

պարտականությունները: Ծնողական իրավունքների իրականացումը: Ծնողական իրավունքներից զրկելը: Ծնողական իրավունքներից զրկելու կարգը: Ծնողական իրավունքների սահմանափակումը: Ծնողական իրավունքներից զրկելու և ծնողական իրավունքների սահմանափակման իրավական հետևանքները: Ծնողական իրավունքների վերականգնումը

Թեմա 7. Ընտանիքի անդամների ալիմենտային պարտավորությունները

Ծնողների և երեխաների ալիմենտային պարտավորությունները: Ամուսինների և նախկին ամուսինների ալիմենտային պարտավորությունները: Ընտանիքի այլ անդամների ալիմենտային պարտավորությունները: Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության կնքման կարգը և պայմանները: Ալիմենտների վճարման և բռնագանձման կարգը: Ալիմենտային պարտավորությունների դադարումը:

Թեմա 8. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դաստիարակության եղանակները

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերումը և հաշվառումը: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման ձևերը: Որդեգրման հասկացությունը, կարգը և պայմանները: Երեխաների նկատմամբ խնամակալությունը և հոգաբարձությունը: Խնամատար ընտանիքի հասկացությունը: Խնամատար ընտանիքում երեխայի խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու կարգը: Խնամատար ընտանիքին վճարվող դրամական միջոցները:

Թեմա 9. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցությամբ ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորումը

Ամուսնության կնքումը հյուպատոսական հիմնարկներում: Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների միջև ամուսնության լուծումը: Ամուսինների անձնական ոչ գույքային

և գույքային իրավունքներն ու պարտականությունները: Ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները: Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի որդեգրումը

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (05.07.1995թ., 27.11.2005թ., 06.12.2015թ փոփոխություններով)
2. ՀՀ ընտանեկան օրենսգիրք, ընդունված 2005թ.
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված 1998թ.
4. "Քաղաքացիական կացության ակտերի գրանցման" մասին ՀՀ օրենք, ընդունված 08.12.2004թ.

Մասնագիտական գրականություն

1. Ղարախանյան Գ. Հ., ՀՀ Ընտանեկան իրավունք, Երևան, 2008թ.
2. Семейное право: учебник и практикум для вузов / Л. М. Пчелинцева [и др.]; под редакцией Л. М. Пчелинцевой ; под общей редакцией Л. В. Цитович. 2-е изд., перераб. и доп. Москва: Издательство Юрайт, 2024.
3. Пчелинцева Л.М., Семейное право России. Учебник для ВУЗов. М., 2002г.; Семейное право: Учебник. Изд. 2-е, перераб. и доп. М. 2002
4. Агапов С. В., Семейное право, 2-е издание, М., 2023.
5. Комментарий к Семейному кодексу РФ (под общей ред. П.В.Крашенинникова и П.И. Седугина) 2-е издание, М.2001г.
6. Максимович Л. Брачный контракт, М.1997г.
7. Кабышев О.А. Усыновление. Опека и попечительство над несовершеннолетними детьми, М.,1998г. Нечаева А.М. Семейное право, курс лекций, 2-ое издание; М.2001
8. Коржиков И. «Доказывания по делам о расторжении брака, Российская юстиция, 1997, N10

9. Чалая Л.А., Бочкова Т.А. Эволюция семейно- брачного права и особенности его развития в России (сравнительно-правовой экскурс). История государства права, 2001г. № 1.
10. Чефранова Е.А. Имущественные отношения в российской семье; М; 1997
11. Бескалов Ю.Ф. Разбирательство дел об установлении отцовства. Российская юстиция, 2000, N6
12. Григорович Е.В. Некоторые аспекты правового регулирвания искусственных методов репродукции. Юрист, 1999г., N2,
13. Егорчева Т.И. Установление отцовства в судебном порядке. Журнал российского права, 2001, N1
14. Хазова О.А. Установление отцовства. Закон,1997г. N11
15. Данилов Е.П. Справочник адвоката. Семейные споры. М, 2001г.
16. Нечаева А.М. Семейное право. Курс лекций. 2-е издание, М., 2001г.
17. Шувалова А.А. Новый перечень видов заработка дохода) родителей, с которых производится взыскание алиментов. Хозяйство и право,1997, N1
18. Шненендорф З.К.Путеводитель по Конвенции о правах ребенка. М.,1997.
19. Кузнецова И.М. Как усыновить ребенка., М.,1997
20. Косова О. Особенности международного усыновления. Законность, 2001, N1.